ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՏԻԿԻՆ Ա. ՋԱՎԱԽՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ջավախյան.

Ի պատասխան Ձեր 30.05.2019թ. հ.01/260 գրության՝ տեղեկացվում է, որ Հայաստանի Հանրապետությունում գործատուն աշխատողներին ամենամյա արձակուրդ տրամադրում է՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի համապատասխան հոդվածների, իսկ նախադպրոցական ուսումնական հաստատություններում արձակուրդում գտնվող աշխատակիցներին փոխարինողների հաստիքներ տրամադրելու կարգը սահմանված է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017թ. նոյեմբերի 16-ի հ.1318-Ն հրամանով:

Միաժամանակ առաջարկվում է քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչությանը տրամադրել այն մանկապարտեզների համարները, որտեղ առկա են աշխատողների իրավունքների խախտման դեպքեր՝ խնդիրն ուսումնասիրելու և կարգավորելու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ